

ՀՐԵՄԱՆԴ ԿԱՌԵՐՈՒՄ ԱՆՁՆԱԿԱՆ ԽՈՐԲԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԻՔԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ՆԵԼԼԻ ՌԱՖԻԿԻ

ԻՍՍԱԻԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԻՆՔՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՒ
ԿԱՅԱՑՄԱՆ ԴԻՆԱՍԻԿԱՆ

Է. 00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
առենախոսության

Սեղմագիր

ԵՐԵՎԱՆ-2013

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ХАЧАТУРЯН НЕЛЛИ РАФИКОВНА

ИСМАЛИЗМ: ДИНАМИКА РАЗВИТИЯ И СТАНОВЛЕНИЯ
ИДЕНТИЧНОСТИ

автореферат

диссертации на соискание ученой степени кандидата
исторических наук по специальности 07.00.04 "Этнография"

ЕРЕВАН-2013

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և
ազգագրության ինստիտուտում

Գիտական դեկան՝ պ.գ.թ., դոցենտ Վ. Ա. Առաքելովա

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆ. Հ. Գ. Մարգարյան
պ.գ.թ., Լ. Դ. Սիմոնյան


Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ
Պաշտպանությունը կայանալու է 2013թ. սեպտեմբերի 10-ին, ժամը 14⁰⁰-ին,
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի
007 հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում
(հասցեն՝ Երևան, 0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և
ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. օգոստոսի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գլուխական քարտուղար

պատմ. գիտ. թեկնածու

 Մելքոնյան Հ. Ա.

Тема диссертации утверждена в

Институте археологии и этнографии НАН РА

Научный руководитель к.и.н, доцент Аракелова В. А.

Официальные оппоненты

д.и.н., проф. Маркарян А. Г.

к.и.н., Симонян Л. Д.

Ведущая организация

Институт Востоковедения НАН РА

Зашита состоится 10 сентября 2013г. в 14⁰⁰ часов, на заседании
специализированного совета 007 по археологии и этнографии в Институте
археологии и этнографии НАН РА (адрес: Ереван 0025, ул. Чаренца 15).
С диссертацией можно ознакомиться в библиотеке Института археологии и
этнографии НАН РА.

Автореферат разослан 10 августа 2013г.

Ученый секретарь специализированного совета

канд. исторических наук

 Մելքոնյան Յ. Ա.

Թեմայի արդիականությունը: Խսմահլականությունը, որպես միջնադարյան
Արևելի հոգնոր մշակույթի անբաժան մաս, զարգանում և փոխակերպվում էր
հասարակության քաղաքական, տնտեսական և մշակութային փոփոխություններին
զուգընթաց: Յուրաքանչյուր երկրում, որտեղ կային այդ դավանանքի հետևողություններին,
խսմահլականությունը ձեռք էր բերում իր ոճը կախված բնակչության էրնիկ և
մշակութային առանձնահատկություններից:

Խսմահլական համայնքն այսօր խոշոր ցանցային կազմակերպություն է, որը
միջնադարյան բարեփոխումների հետևանքով ձեռք է բերել ձկուն բնույթ: Նման
ձկունությունը մի կողմից թույլ է տալիս պահպանել դրա հիմնական սկզբունքները,
համարյա թե ցանկացած քաղաքական, տնտեսական կամ մշակութային
միջավայրում, իսկ մյուս կողմից՝ հարմարվել տեղական
առանձնահատկություններին, իհանալի կերպով ներգրվելով ցանկացած էրնիկ
միջավայր՝ չկորցնելով սեփական ինքնության հիմքերը:

Ներկայումս խսմահլիները իրենցից ներկայացնում են ոչ միայն
համաշխարհային մասշտարկով հզոր քաղաքական ուժ, որն ազդեցություն ունի
տարբեր երկների կառավարական օղակների, ինչպես նաև որոշ շրջանների
տնտեսության զարգացման գործընթացների վրա, այլ նաև ունի որոշակի ռազմական
պոտենցիալ:

Այս տեսանկյունից առավել արդիական ենք համարում խսմահլական
ինքնության զարգացման, նրա առանձնահատկությունների, ներկայիս դիրքի և
միտումների ուսումնասիրությունը:

Ինքնությունը իր հերթին, որպես խմբային պատկանելիության միջոցով
ինքնորոշման երևոյթ, համարվում է ժամանակակից ազգագրության
ուսումնասիրությունների արդիական թեմաներից մեկը: Դա հատկապես
վերաբերում է ոչ միայն էրնիկ-դավանական հանրույթների ինքնության խնդիրներին,
այլև սուրբենիկ խմբերին՝ կրոնական ինքնախտակցության վառ արտահայտումը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության
նպատակն է ուսումնասիրել խսմահլականների ինքնության ձևադրման,
զարգացման և փոխակերպման պատմությունը, որա ներկայիս վիճակը: Այդ
նպատակով առաջարկվել են հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել խսմահլականության պատմությունը՝ խսմահլական
ինքնության կայացման տեսանկյունից,
- ✓ ուսումնասիրել տարբեր ժողովուրդների միջև այդ դավանանքի
տարածման պատմությունը՝ շեշտելով խսմահլական
ինքնախտակցության բյուրեղացման երևոյթը տարբեր էրնիկ և
մշակութային միջավայրերում,
- ✓ քննարկել խսմահլականների առավել ազդեցիկ համայնքների
ձևակորումն ու զարգացումը ու համախմահլական ինքնության
բացառիկ դերը վերոհիշյալ գործընթացներում,
- ✓ շեշտել խսմահլականների դերը խսմահլական ազդեցիկ համայնք
ունեցող երկրների քաղաքական իրավիճակի ձևակորումն առաջարկվում

- ✓ ուսումնասիրել ժամանակակից խմախլական խմամների (հոգևոր առաջնորդների) գործունեությունը և նրանց ազդեցությունը ժամանակակից համաշխարհային խմախլական համայնքի ինքնության ձևավորման վրա,
- ✓ առանձնացնել խմախլիների ինքնության հիմնական ցուցանիշները տարբեր պատմական շրջաններում:

Առենախոսության գիտական նորոյթը: Աշխատանքի նորությունը կայանում է նրանում, որ առաջին անգամ կատարվում է խմախլական ինքնության զարգացման դինամիկայի ուսումնասիրության փորձ՝ սկսած դրա ձևավորման շրջանից մինչ նորագոյն ժամանակները։ Սա նաև առաջին փորձն է խմախլականների ինքնության հիմնական ցուցիչների առանձնացման գործընթացում։

Հետագոտվել է խմախլական համայնքների ժամանակակից դրությունը, դուրս է քերվել խմախլական իմասների՝ Աղա Խանների անմիջական ազդեցությունը ժամանակակից խմախլականների ինքնության ձևավորման վրա, առանձնացվել են խմախլական ինքնության հիմնական հատկանիշները տարբեր պատմական ժամանակաշրջաններում։

Խմախլականների ինքնության թեման երեք չի հանդիսացել որևէ ընդհանրական ուսումնասիրության առարկա։

Հետագոտության մեթոդը: Ուսումնասիրությունը կատարված է պատմահամեմատական մեթոդի և համեմատական կրոնագիտության ապարատի հետևողական կիրառմամբ։

Ուսումնասիրության կիրառական նշանակությունը: Սույն ուսումնասիրությունը կարող է օգտագործվել որպես տեսական բազա ինքնության ձևավոխման դինամիկայի վերլուծության համար։

Աշխատանքի կիրառական և տեսական նշանակությունը կայանում է նաև նրանում, որ խմախլականների ինքնության դինամիկայի ուսումնասիրությունը իրականում իրենից ներկայացնում է մի այնպիսի ֆենոմենի բազային վերլուծություն, երբ կրոնական բարեփոխումները, բացի դոգմատիկ ոլորտի վրա ազդելուց, իրենց ազդեցությունն են թողնում նաև համայնքի սոցիալական կառուցվածքի վրա վերափոխելով այն ավելի ձկուն, բայց միևնույն ժամանակ, որոշակի և հստակ ձևավորված նվիրապեսություն ունեցող համակարգի։

Բացի այդ, պահպանելով ընտրյանների համար նախատեսված է զոտերիկ գիտելիքի հիմքերը, խմախլական բարեփոխումները յուրովի կերպով, պատմական որոշակի փուլում, համայնքը դուրս մղեցին վերերնիկ մակարդակ։ Հակառակ դեպքում խմախլականությունը կվերածվեր էնդոզամ բնույթի էզոտերիկ համայնքի։

Մի կողմից էրուժիկ ուսմունքից միսիոներական բնույթը ունեցող կրոնական համակարգի (VIII – XVIII դդ.) անցումը, մյուս կողմից էլ ակտիվ բարեփոխումների ժամանակաշրջանում (XVIII դ. – նորագոյն ժամանակները) կրոնական գիտելիքի էզոտերիկ բնույթի պահպանումը համայնքի ներսում դրան հաղորդեցին յուրահատուկ վերերնիկ բնույթ։

Վաղ և միջնադարյան խմախլականության միսիոներական բնույթը, որն այնքան է հատուկ չէ ծայրահեղ շիական «հերետիկական» դաշտին, հիերարքիստական կատուցվածքում հստակ մշակված փոխազդեցության համակարգի հետ մեկտեղ, թույլ տվեց համայնքին վերաճել միջազգային ցանցային մի կառույցի, որը միավորում է Աղքանատանի, Տաջիկստանի, Աֆրիկայի, Չինաստանի և այլ երկրների խմախլականներին մեկ համախմախլական ինքնազիտակցությամբ և ընդհանուր հիերարխիկ համակարգով։

Բնույթով նմանատիպ եօնակի ֆենոմենը որոշակի ասպեկտներում կարող է գուգահեռներ ունենալ մի շարք այլ կրոնական ուսմունքների հետ, առաջին հերթին մուտքամանական ոչ դրվագատիկ միջավայրում, մանավանդ ներկա ժամանակներում, եթե շատ էգութերիկ համայնքներ արագորեն կորցնում են իրենց փակ բնույթը։

Այսպիսով, ներկա աշխատանքը կարող է տեսական հիմք հանդիսանալ ոչ դրվագատիկ դաշտի կրոնական համայնքների բարեփոխումների գործընթացների վերլուծության համար, որոնք, իրենց հերթին, որոշակի պատմական շրջաններում ուղեկցվել են միսիոներական բնույթին ժամանակավոր անցմանը։

Ուսումնասիրության փորձաքննությունը: Առենախոսությունը պատրաստվել և քննարկվել է ԵՊՀ-ի Իրանագիտության ամբիոնում։ Առենախոսությունը երաշխավորվել է պաշտպանության ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության հնատիտուտի Արդիականության ազգաբանության բաժնի նիստում։

Առենախոսության ծավալն ու կառուցվածքը: Առենախոսությունը բաղկացած է առաջարանից, երեք զիմից, համապատասխան ենթագրուխներով և եզրակացություններից։ Հիմնական շարադրանիք ծավալն է 170 էջ։

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԱԲԱՆ

Առաջարանում դիտարկված է թեմայի արդիականությունը, հիմնական նպատակը, առկա խնդիրները և մանրամասն ներկայացնում է պատմագրությունը։ Առանձնահատուկ տեղ է հատկացվում խմախլականությանը վերաբերող հետազոտությունների զարգացմանը և հետանկարներին։

ԳԼՈՒԽ I. ԻՍՍԱԽԼԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՋԱՑԱՑԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին զիմում մանրամասն նկարագրված է խմախլականության ուսումնասիրման սպեցիֆիկան, ներկայացնում և վերլուծվում է հետազոտման առարկան։ Այս զիմում ատենախոսը բացահայտում է խմախլականության ֆենոմենը և այն ներկայացնում ինչպես ներսից՝ խմախլական աղբյուրների, այնպես էլ սուննիական հերետիկաբանության տեսանկյունից։ Հատուկ համեմատական զուգահեռներ են տարբեր վերոհիշյալ երկու մոտեցումների միջև։

Խմախլականությունը սկիզբ է առել VIII դարում, 6-րդ շիական խմամի՝ Զաֆար աս-Սադիկի ժառանգորդների միջև բնուկված հակամարտության հետևանքով։ Խմահի իրն Զաֆարի, այնուհետև նրա որդու՝ Մուհամադի իրն Խմախլի

հետևորդները հետազոյւմ սկսեցին կոչվել խմախլականներ: Զաֆար աս-Սաղիկը կատարելագործել է խմամարի սկզբունքը, որի հիմքում ընկած է հավատը դեպի անսխալսկան և անմեղ Իմամը, որը մշտապես պետք է դեկավարի մարդկությանը հիմնվելով աստվածային առաջնորդության վրա: Կատարելագործված տարբերակում Իմամը իրավունք ունի կիրառել քակիյայի սկզբունքը, այսինքն՝ կրոնական կոնսպիրացիան: Իմամը օժտված է կառավարելու բոլոր իրավատարդուններով և իրենից ներկայացնում է անքննելի և անառարկելի կրոնական առաջնորդ: Այս սկզբունքը հետազոյւմ լայն կիրառություն ստացավ խմախլականների շրջանում և հիմք հանդիսացավ նրանց ինքնուրյան ձևավորման համար:

Խմախլականությունը ծայրահեռ շիական մի ուսմունք է, որն ունի զարգացած դոգմատիկ համակարգ: Խմախլական ուսմունքն ունի հարուստ աստվածաբանական զրականություն, որը աստեղծվել է խմախլական տեսաբանների կողմից: Բացի այդ, լինելով մուսուլմանական «հերետիկական» միջավայրի կարևորագույն բաղադրիչներից մեջը, խմախլականությունը ունալ ազդեցություն է թողել իր տարածման շրջանների հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի վրա ու հաճախակի դարձել է սուննիական հերետիկաբանների տարաբնույթ հետազոտությունների առարկա:

Ֆաթիման խալֆայության ստեղծումը վերջնականապես դուրս մղեց խմախլականությունը խալամի հիմնական հորձանություն, ինչը և խմախլականներին հաղորդեց յուրահատկության և էլիտարության հինքնագիտակցություն: Բազմաթիվ խմախլական միփոնները դարձան հանրաճանաչ զինուականներ, որոնք իրենց որույն ներդրում են ունեցել խալմական մտքի և մշակույթի զարգացման մեջ:

Խմախլականությունը շիական խալամի ամենանշանակալի և ամենակազմակերպված ճյուղերից մեկն է: Ընդհուպ մինչև XXդ.-ի 30-ական թթ. այն մնում էր առեղծվածային և քիչ ուսումնասիրված: Հետազոտելով խմախլականությունը՝ զինուականները հիմնականում կախման մեջ էին ընկնում հակասմախլական գործերից, որոնք են հիմնականում մուսուլմանական սուննիական բանավիճական, հերետիկոսաբանական, պատմական, ինչպես նաև միջնադարյան եկրոպական ժամանակագրական աշխատությունները: Բուն խմախլական հեղինակների աշխատությունները մնում էին անհասանելի, քանի որ հիմնովին թարցվում էին համայնքների կողմից: Արդյունքում խմախլականությունը բազմաթիվ դարեր մնում էր պատված առասպեկտներով և խեղաթյուրումներով:

Խմախլականության ուսումնասիրման և դրա պատմական առանձնահատկությունը սերտ փոխկապակցված են խմախլական շարժման բնույթի ու փոփոխական պատմա-քաղաքական ձակատագրի հետ: Հայտնի է, որ միջնադարյան սուննի հեղինակները դիտարկում էին խալամի շիական մեկնարանությունները որպես այլադավանություն: Խոկ ինչ վերաբերում է խմախլականությանը, ապա սուննիները խմախլականներին ընդհանրապես մուտքաման չեն համարում: Խմախլականությունը սուննի հեղինակների կողմից դիտարկվում էր որպես գերիերենտիկոսություն: Նրանք ժիստում էին խմախլական իմամների ծագումը Ալիից: Խմախլականությունը, ըստ սուննի հեղինակների,

ներկայացվում էր որպես խարերա ինքնակոչների մի ուսմունք, որը նպատակադրված էր պառակտել խալամի: Այն նաև ներկայացվում էր որպես հրեական մողերի կողմից ստեղծված խալամի խարիսկելու մի ծրագիր:

Տակախամախլական զաղափարախոսւթյան տարածման արդյունավետ մեթոդներից էր կեղծ խմախլական աշխատությունների տարածումը, որտեղ ներկայացվում էին խմախլականությունը վարկարեկող տեղեկություններ: Ըստ Ս. Բերտելսի՝ հակախմախլական ուղղվածությունը ունեցող աշխատություններում գերակշռում էին խմախլականների նկատմամբ հետևյալ մեղադրանքները խալամի քայրայելու, շարիաթը չեղյալ համարելու և կանանց ընդհանրական դարձնելու մեջ:

Մուտքամանական հեղինակները քննադատում էին նաև խմախլական դոգմատիկայում տեղ գտած հոգիների վերաբնակեցման մասին ուսմունքը՝ քանատուիլու-ը (մերեմփախլողը), որը, հնարավոր է, փոխառված էր նեոփոյությանականներից:

Խմախլականությունը ուսումնասիրելու ոլորտում համեմատական առաջնորդաց է նկատվում 19-րդ դարի սկզբից, երբ արևելագետները Սիրիաստ դե Սասի զիխավորությամբ (1758-1838 թթ.) սկսում են ուսումնասիրել խմախլական բնագրերը արաբակեզու աղյուրները: Խոկ 20-րդ դարի 30-ական թթ. արձանագրվում է խմախլական հետազոտությունների վերելք: Առաջընթացը մատնանշվում է հատկապես այն պահից, երբ ի հայտ են զալիս բազմաթիվ խմախլական տեքստեր, որոնք դարեր ի վեր գաղտնի պահիվում էին մասնավոր հավաքածուներում, հատկապես խմախլական կրոնական գրքիչների մոտ:

Բազմաթիվ ձեռագրեր հայտնաբերվեցին Սիրիայում և Միջին Ասիայում, որոնք անմիջապես սկսեցին ուսումնասիրվել: Իրանական խմախլականների մի շարք ձեռագրեր բացահայտվեցին Շուղաննում, Ռուշանում, Վախանում և Բաղախանի այլ շրջաններում:

ԳԼՈՒԽ II. ԽՍՍԱԻԼԱԿԱՄ ԻՆՔՍՈՒԹՅԱՆ ԶԵՒԱԿՈՐՄԱՆ ԱՌԱՆՉԱՆԱՑԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երկրորդ գլուխը իրենից ներկայացնում է խմախլական ինքնուրյան զարգացման դիմամիկայի վերլուծություն՝ սկսած վաս խալամի (շիխսի և ծայրահեռ շիական ուսմունքների ստեղծման) ժամանակաշրջանից մինչ խմախլականների նորագույն պատմությունը (բարեփոխումների և միջազգային քաղաքականության ժամանակաշրջանը):

Քանի որ խմախլականության պատմությունը արդին լավ ուսումնասիրված է և մանրակրկիտ փաստագրված է բազմաթիվ պատմական աղյուրներում, այս զիխի հիմնական խնդիրներից էր ներկայացնել այդ պատմությունը մասնակիրապես խմախլական ինքնուրյան զարգացման և փոխակերպման տեսանկյունից:

Այս գլուխը մանրամասն դիտարկում է խմախլականների ինքնագիտակցության տարբեր, հաճախ միմյանց հակասող ասպեկտները, պատմական ժամանակահատվածներում, խմախլականների համախմբումը կամ, հակառակը, թուլացումը կոնկրետ պատմական հանգամանքներից, համայնքի

կրոնական կամ ոչ ֆորմալ առաջնորդից, բնակեցման երկրում հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակույթային իրավիճակներից կախված:

Հատուկ շեշտված են աղանդի առաջնորդների ջանքերը իսմահլականների ինքնուրժան վերաձևավորման և ամրապնդման հարցերում: Հատկապես դասակարգվում են վաղմիջնադարյան և ուշ միջնադարյան իսմահլականների ինքնուրժան ցուցիչները: Օրինակ «իսմահլականներ - Իսմահի հետևորդներ», «իրական» իսմահլականներ, «իսմահլականուրժուն - յուրահատկուրժուն և կիսարուրժուն մուտուլմանական աշխարհում», «նիզարի իսմահլականներ - ծայրահետ ընդդիմուրժուն» և այլն:

Իսմահլականուրժունը, որպես կրոնափիլիսոփայական ուսմունք, կատարելագրծվում էր դեռ երկար ժամանակ, և այդ կատարելագրծումը համատեղվում էր գյուտնելու անընդմեջ պայքարով: Ուսմունքի մատչելիության և առանձնահատկուրժան պատճառով այն միշտ հեշտությամբ տարածվում էր տարբեր երկրներում տարբեր ազգերի մեջ: Բազմաթիվ մշակույթների և կրոնական ուսմունքների հետ բախվելիս, նաև, թշնամական սուննիական շրջապատում մշտական գտնվելը, հանգեցրին իսմահլական իրականուրժան մեջ այնպիսի մի ֆենոմենի ստեղծմանը, որն է՝ տվյալ պատմական ժամանակահատվածի պահանջներին համապատասխան ինքնուրժան անընդմեջ տրանսֆորմացիա:

Վաղ իսմահլականների ինքնուրժան ձևավորման հիմքում ընկած էր Մուհամմադի իր իսմահի ուսմունք Սահիբի մասին, այն է՝ մեսսիայի մոտավոր գալուստի սպասումը, որը կիրկի նեյյալներին և Ճշվածներին Արքայանների անարդար հասարակարգից: Իսմահլականները նույնացնում էին իրենց Արքայանների դեմ սոցիալական և կրոնական բողոքի շարժման հետ: Իսկ համընդհանուր հակասարական տրամադրությունները տարածաշրջանում միայն խրանում էին իսմահլականուրժան արագ և արդյունավետ տարածմանը:

Այլի հետնորդի կողմից զիխավորած ընդդիմադիր շարժման գաղափարը, էզորերիզմը, թակիայի սկզբունքը դարձան իսմահլականների ինքնուրժան զարգացման հիմնական վեկտորը: Նշելով իսմահլականների և նրանց առաջնորդների ձկունուրժունը, ինչպես նաև ցանկացած պայմաններին հարմարվելու նրանց կարողությունը, արար պատմիչ և փիլիսոփա Արու ալ Ֆաթ Մուհամմադ աշ-Շահրաբանին նշում էր, որ նրանք (իսմահլականները) բոլոր ժամանակներում և բոլոր լեզուներով քարոզություն էին վարում:

Ֆարիմյանների պետություն-խալիֆաթի ստեղծումով իսմահլականուրժունը վերջնականապես անշատվեց խալամի հիմնական հունից, որը և ամրապնդեց նրանց մեջ եղակիության և կիսարության ինքնագիտակցությունը: Դրանից հետո իսմահլականները համարում էին իրենց Այլի և Մուհամմեդ մարզարեի դստեր Ֆարիմյայի հետնորդները: Այս շրջանում իսմահլականները շիհզմի անունից մարտահրավեր նետեցին Արքայան գերիշխանուրժանը և սուննիական ավանդույթին:

Իսմահլական ինքնուրժան զարգացման և կայացման վրա դրական ազդեցությունն ունեցավ նաև Ֆարիմյան պետության միստիներական գործունեությունը և իսմահլական կրոնական մտքի կայացման գործընթացը: Որոշ

հետազոտողներ կարծում են, որ հենց այդ ժամանակաշրջանում իսմահլական աստվածաբանները հանդէս եկան դուրսնական շատ դրութների դեմ:

1094թ. իմամաթը ժառանգելու հարցի շուրջ ծագած երկարատև պառակտումը կիսեց իսմահլական միասնական համանրը երկու մրցակից խմբերի՝ նիզարիների և մուսուլմանների: Ժամանակակից իսմահլականները նիզարիների հետևորդներն են: Սուստալի իսմահլականներից պահպանվել են միայն մի քանի փոքրաթիվ փակ համայնքներ Հնդկաստանում և Յեւնուում:

11դ.-ում, իսմահլական դայիի (միսիոներ) Հասան աս-Սարահի առաջնորդությամբ ձևավորվում է Իրանի նիզարի իսմահլականների համայնքը և իսմահլական ուր պետությունը Իրանի Ղազվին շրջանում, որի կենտրոնը ընտրվեց Ալամուր քերդը: Հասանը հիմնում է նաև ուր իսմահլական նիզարիական գաղափարախոսություն:

Հասան աս-Սարահի բարեփոխումները իսմահլականներին հաղորդեցին ծայրահետ և պայքարող աղանդի բնույթը: Նրա դերը նիզարիական իսմահլականուրժան ինքնուրժան ձևավորման մեջ վճռորոշ էր: Հասանի ներիսմահլականուրժունը ձեռք բերեց զադունի քաղաքական ինստիտուտի բնույթը, որտեղ իմամին ենթարկվելու դարձավ օրենքը: Այս պատմական ժամանակահատվածում իսմահլականների շարժումը վերածվել էր Սելջուկյանների դեմ պայքարի: Եվ այդ պայքարի արդյունքում ստեղծվեց ասասինների եղբայրակցությունը (օրդեն ասսասին): Նրանց ինքնուրժունը ամրապնդելու համար իսմահլական դեկապարները մշտապես շեշտում էին քարշին (ուսմունք ներքին) գաղափարախոսությունը և կրոնական ներքին հոգերին հոգերին ասպեկտը:

Դատելով այն բանից, թե ինչպես էին զարգանում իրադարձությունները, իսմահլականները համարում էին իրենց մուտքումանների հասուն ենթախումք: Իսկ որպես կրոնական լեզու ընտրված էր պարսկերներ, որը և հաղորդեց իսմահլականներին ինքնուրժան իրանական ուղղվածություն:

Հետազոյնում աղանդի ծայրահեղական բնույթը վերածվեց քաղաքական ձկունուրժան: Ալամուրյան դարաշրջանի վերջում իսմահլական առաջնորդները լոյալ դիրքեր գրավեցին ուղղափառ մահմեդականների հանդեպ: Վերականգնվեցին զահիր (արտաքին) ուսմունքը, շարիաթը, մզկիթները և սահմանված աղոթքները: Այս ժամանակահատվածում իսմահլականների մեկուսացումը արտաքին աշխարհից թուլանում է և ինքնուրժան վեկտորը ուղղվում է դեպի սուննիական խլամը:

13-րդ դարում, մոնղոլական արշավանքների արդյունքում, Ալամուրյան պետությունը դադարում է գյուրտյուն ունենալուց: Իսմահլականները ցրվում են աշխարհի տարբեր երկրներով, հաստատվում են Սիրիայում, Կենտրոնական Ասիայում, Հնդկաստանում, իսկ մի փոքր հատվածը մտնում է Իրանում ու քողարկվում սուֆիական դիմակի ներքին: Եվ միայն 15-րդ դարում, սուֆիական փիրկերի տեսքով իսմահլական իմամները հայտնվում են Իրանի Անջուղան շրջանում:

Անջուղանյան «Վերածնունդի» ժամանակ տեղի ունեցող բարեփոխումները կարենը դեր են խաղացել իսմահլական կրոնական ինքնուրժան նոր որակի կայացման մեջ: Իմամների հետ կապը կազմակերպվում էր միահներների ցանքի միջոցով:

Այս ընթացքում իսմահլականների ինքնուրյան պահպանման գործընթացում իմամի դերը շատ պեկի արտահայտված և որոշակի դարձավ: Իրանի քաղաքական պահպանումը բերքի հող հանդիսացավ շիամետ տրամադրությունների զարգացման համար: Մեջյան շիփումը իր հերթին խթան հանդիսացավ իսմահլականների ինքնուրյան թարմացման և արդիականացման համար:

Այս ժամանակ իսմահլի քարոզիչները գործում էին Կենտրոնական Ասիայում և Հնդկաստանում:

Իսմահլականների ինքնուրյան ձեսվորումը Հնդկաստանում ընթանում էր յուրով՝ հինդուիզմի ազդեցության ներքո: Հնդկաստանում ձեսվորվեց նիզարիական իսմահլականուրյան նոր ձև՝ սաստպանական կամ «ֆրական ուղղ»: Սա իսմահլականուրյան յուրօրինակ հինդուացված տեսակ է: Փիրերը ձեսվորում էին հինդուական առասպեկտանուրյունը և հերքարների պյուծեները՝ ամեն գնով հնդիկներին դեպի իսմահլականուրյուն բերելու համար: Քարոզչության արդյունավետությունը և ծավալները մեծացնելու նպատակով նրանք ավել շատ օգտագործում էին հնդկական լեզուները, քան արաբերենը կամ պարսկերենը:

Այսօր իսմահլականուրյունը իրենից ներկայացնում է խոշոր ցանցային կառույց, որի մեջ բազմադարյան անընդմեջ բարեփոխումների հետևանքով մշակվել է ձկուն ինքնուրյուն: Այդ ձկունուրյունը մի կողմից բույլ է տալիս պահպանել իսմահլականուրյան հիմնական սկզբունքները գրեթե ցանկացած քաղաքական, տնտեսական ու մշակութային միջավայրում, իսկ մյուս կողմից՝ հարմարվել տեղական պայմաններին՝ հիանալի կերպով ինտերվելով ցանկացած էթնիկ միջավայրի մեջ և դրա հետ մեկտեղ չկորցնելով սեփական իսմահլական ինքնուրյունը: Նման իրավիճակը առավել արդիական է դարձնում իսմահլական ինքնուրյան զարգացման և կայացման առանձնահատկությունների, նրա ժամանակակից վիճակի և զարգացման միտումների ուսունասիրումը:

Իսմահլականուրյան պատմության վերլուծությունը ցոյց է տալիս, որ իսմահլական բարեփոխումները, պատմական որոշակի ժամանակահատվածում երբեմն էզուտերիկ համայնքը դուրս մղեցին վերեթնիկ մակարդակ: Մենք նկատում ենք նաև իսմահլական ինքնուրյան տրանսֆորմացիայի յուրահատուկ դինամիկա՝ բազային, կրոնական ասպեկտի պահպանմամբ:

ԳԼՈՒԽ III. ԻՆՔՍՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՍՏԱԿԱԿԱՔԻՑ ԻՍՍԱԽԼԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Երրորդ գլուխը կարևորում է իսմահլականների միջազգային համայնքի ժամանակակից վիճակը, զարգացման միտումները, հատուկ շեշտադրելով իսմահլական վերջին իմաստների, Այս Խանների՝ համայնքի մոդերնիզացիայի և բարեփոխումների բաղարականուրյունը, որն ուրբակի կերպով նպաստել է ժամանակակից իսմահլիզմի զարգացմանն ու կայացմանը, ինչպես նաև ժամանակակից իսմահլականների ինքնուրյան ամրապնդմանը: Հատուկ ուշադրություն է դարձվել մշտական բարեփոխումների առկայությանը, որոնք հանդիսանում են իսմահլական համայնքի գոյատևման հիմնական ձևը:

Պատմական նորագոյն դարաշրջանում իսմահլական կրոնական առաջնորդների կերպարները կազմել են ժամանակակից իսմահլականների ինքնուրյան հիմքը: Այդ պատճառով կարենու ենք համարել մանրամասն վերլուծել Աղա Խաններից յուրաքանչյուրի գործունեությունը, նրանց ներդրումը ժամանակակից իսմահլականների ինքնուրյան կայացման գործում ու համայնքի զարգացման առանձնահատկությունները յուրաքանչյուր իմամի կառավարման օրոք:

1848 թ. իսմահլական իմամը՝ Աղա Խան Ի-ը, բնակություն է հաստատում Բումբերում: Սրանով նշանափորվում է իսմահլականների նորագոյն պատմության սկիզբը: Բրիտանական Հնդկաստանի սահմաններում, բրիտանական կառավարության հետ ստեղծված բարյացակամ հարաբերությունների շնորհիվ, Աղա Խան Ի-ը և իր հետևողները գոնվում էին պետության պաշտպանության ներքո: Այս իրողությունը մեծապես նպաստեց իսմահլականների դիրքի ամրապնդմանը հնդկական հասարակության մեջ: «Բումբերական ժամանակաշրջանը» տևեց գրեթե երեսուն տարի, և, հատկապես այդ ժամանակ, Աղա Խան Ի-ին հաջողվեց համախմբել շատ ցրված իսմահլական համայնքներ: Հնդկաստանի նիզարիական իսմահլական համայնքը վերջապես հնարավորություն ստացալ տեսնելու իր իմամին: Իսկ իմամը հնարավորություն ստացալ սկսել համայնքի մոդերնիզացիայի գործունեությունը: Այս իրավիճակը նպաստեց Հնդկաստանում իսմահլականների դիրքերի ամրապնդմանը:

Աղա Խան II-ը դեկավարել է իսմահլական համայնքը չորս տարի: Այդ կարձ ժամանակահատվածում նրան հաջողվեց պահպանել և զարգացնել իր հոր օրոք ստեղծված սերտ հարաբերությունները բրիտանական կառավարության հետ և մի շարք բարեփոխումներին ընթացը տալ: Նա զբաղվում էր իր հետևողների համար կրթական և առողջապահական ծրագրերի մշակմամբ:

Ժամանակակից պատմության մեջ իմաստներից յուրաքանչյուրի անձը իրենից ներկայացնում է իսմահլականների ինքնուրյան ու միավորման կարենու գործունքը: Այս գլուխը մանրամասն դիտարկում է իսմահլականների տարբեր համայնքներում կատարված կարևորագոյն բարեփոխումները, իսմահլական սահմանադրության ստեղծումը և իսմահլական միջազգային համայնքում տեղ գտած մոդերնիզացիայի գործնքացները:

Այս բնոր փոփոխությունները հիմք հանդիսացան ժամանակակից իսմահլականների մոտ ինքնուրյան վերանայման և բազմախննության (մոլուստականություն) կամ բարդ ինքնուրյան զարգացման համար:

Աշխատանքում նաև վերլուծված են իսմահլական խոշոր համայնքների վերափոխումների գործնքացները: Ներկայացված են Իրանի, Չինաստանի, Պակիստանի, Աֆղանստանի, Արևելյան Աֆրիկայի, Հնդկաստանի, Սիրիայի, Տաջիկաստանի, Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի համայնքները:

Այս գլուխը վերլուծվում էն իսմահլական իմաստների կողմից առաջարված և ընթացը ստացած իմաստական բարեփոխումների ծրագրերը, որոնք են՝ վեստերնիզացիայի, դեկինդուփացիայի և իզլամիզացիայի ու քորումները: Այս ուժորմները բավականին մեծ ազդեցություն ունեցան ժամանակակից իսմահլիների ինքնուրյան կայացման և համայնքների բարելավման գործնքացների վրա: Այս

բարեփոխումների արդյունքում տեղի ունեցան իսմահիլների երկու խոշոր միջրացիոն ալիքներ՝ Հնդկաստանից, Միջին Ասիայից, Միջին Արևելից դեպի Աֆրիկա և Աֆրիկայից դեպի Եվրոպա, Կանադա և ԱՄՆ:

Ժամանակակից բարեփոխումների ծրագրերը ներդրվել են նաև Աղա Խան III -ի կողմից և արդյունավետ շարունակվում են Աղա Խան IV-ի կառավարման օրոք: Հինդուական ծեսերի սահմանափակումը յուրավի նպաստեց ժամանակակից իսմահիլների ինքնուրյան արևմտականացմանը: Արևմտականացման իհմանական ասպեկտներն էին կրթական բարեփոխումների ներմուծումը. թույլ տրվեց կանանց կրթությունը, վերացավ կրոնական զգեստը կրելու ավանդույթը, կանայք սկսեցին զրադակել հասարակական, քաղաքական և պրոֆեսիոնալ գործունեությամբ, կրթության եւ առողջապահության ոլորտներում ավելացավ փորձագետների քանակը, մեծ գումարներ հատկացվեցին բիզնեսի զարգացմանը, տեղի ունեցավ առևտության արտադրություն անցումը: Արևմտականացման բարեփոխումները իհմանական իրականացվում էին «առաջադեմ Արևմտությ» և «հնացած Արևելի» հակադրման զաղափարախոսության ներքո:

Դեինդուիզացիայի ռեֆորմները, իրենց հերթին, նպաստեցին իսմահիլական համայնքի իշլամիզացիային:

Այսօր իսմահիլականների մոտ վառ արտահայտված է իսմահիլամուսուլմանական ինքնուրյունը: Աղա Խան III-ի (1885-1957 - իմամաթի տարիներ) կրոնական բարեփոխումների քաղաքականությունը կենտրոնացված էր իսմահիլականների ինքնուրյան վերանայման և հաստատման վրա, որոնք այդուհանդերձ պարտավոր էին հարգել այլ մուսուլմանական համայնքների ավանդույթները:

1905թ. Աղա Խան III նախաձեռնությամբ հրատարակվում է «Նիզարի իսմահիլների իհմանական Օրենքը», որը, ըստ Էռթյան, իսմահիլական համայնքի առաջն օրենսգրքն է: Այս իրադարձությունը կարմորներից էր ժամանակակից իսմահիլականների ինքնուրյան վերանայման և կայացման գործում: Սա իսմահիլական ինքնուրյան վերբալիզացիայի սկիզբն էր:

Հինդուական ծեսերի վրա դրված սահմանափակումները ընդգծեցին իսմահիլականների ինքնուրյան հոգևոր և եզուտերիկ առանձնահատկությունը: Բազմաթիվ կրթական բարեփոխումները, (օրինակ, կանանց կրթության բույլատրումը) խթանեցին իսմահիլականների առաջընթացը՝ հնարավորություն տալով նրանց ձեռք բերել մրցունակ մասնագիտություններ և ժամանակակից աշխարհում առաջատար դիրքեր գրավել:

Հետագայում Աղա Խան IV (ներկայիս իմամը) շարունակում է նախորդի բարեփոխումների ծրագիրը: Այդ նպատակով նա ստեղծում է կազմակերպությունների ցանց, որոնք ընդգրկում են, օրինակ՝ Աղա Խանի Զարգացման ցանցը - Aga Khan Development Network; AKDN (նպատակաուղղված է իսմահիլականների միջազգային համայնքի և իսմահիլականների բնակության գոտիների սոցիալական, տնտեսական և մշակութային զարգացման ծրագրերի իրականացմանը), Աղա Խանի հիմնադրամը - Aga Khan Fund; AKF (որը միջազգային բարեգործական հիմնադրամ է, իրականացնում է 100-ից ավել բարեգործական

ծրագրեր, ավելի քան 15 երկրներում: Հիմնադրամն աշխատում է ոչ միայն իսմահիլական համայնքների բարեկավման ուղղությամբ, այլև զարգացող երկրներին օգնություն տրամադրելով), «Իսմահիլական ուղի» և Կրոնական Կրթության Կարչությունը - Ismaili Tarikah and Religious Education Board; ITREB (որը պատասխանատու է իսմահիլական կրոնական գրականության և իսմահիլական երեխանների համար նախատեսված կրոնական բնույթի դպրոցական ծրագրերի ստեղծման և դրանք տարածելու համար: Վարչությունը նաև վերահսկում է իսմահիլական կրոնական գործիչների՝ ավանդական բարողիչների (դայինների) գործունեությունը, որոնք իրավունք ունեն բարոգել միայն իսմահիլական համայնքներում և լիազորված չեն իրենց շարքերը նորադարձներ ներգրավել) և այլն:

Աղա Խանի կողմից ստեղծված կազմակերպությունները ներկայում արդյունավետ աշխատում են Բանգլադեշում, Պանայայում, Հնդկաստանում, Քենյայում, Սուզամբիկում, Պակիստանում, Պորտուգալիայում, Շվեյցարիայում, Տաջիկստանում, Տանզանիայում, Ուգանդայում, Սեն Ֆրանչանիայում եւ ԱՍՍ-ում: Վերջերս, բարեկաման մի շարք ծրագրեր սկսել են գործել Աֆղանստանում և Սիրիայում:

1986թ. Աղա Խան IV տպագրում է վերանայված իսմահիլական սահմանադրությունը, որն այժմ կոչվում է «Շիա իմամական իսմահիլական մուսուլմանների կանոնադրություն» (The Constitution of Shia Imami Ismaili Muslims), որտեղ պարզ երևում է ժամանակակից իսմահիլականների ինքնուրյան ուղղվածությունը դեպի իշլամը:

Աշխարհի իսմահիլականների ինքնուրյունը զլրավացնելու նպատակով Աղա Խան IV միավորում է իսմահիլական բոլոր համայնքները մեկ սահմանադրությամբ, ընդհանուր օրենքներով և ծիսակարգերով: Որպես շիման միջազգային լեզու ընտրվում է անգլերենը:

Այսօր երիտասարդ իսմահիլականները արդեն ուխտագնացության են մեկնում Սերբա, պահը են պահում Ռամազան ամսին: Զամաար-խանները (իսմահիլականների աղոթատները) ավելի շատ նախավում են մզկիթների, համայնքում տոնվում են ավելի վաղ շրջանում անտեսված մուսուլմանական տոնները:

Ժամանակակից իսմահիլականության կարեռագույն հատկանիշներից մեկն է այն է, որ ցանկացած երկրի տեղական իսմահիլական համայնքը, ինչպես նաև իսմահիլականների միջազգային համայնքը, ունի խորհրդարանական կառուցվածք: Իսմահիլականների կառավարական համակարգը այսօր կարող է մրցակցել բազմաթիվ պետական խորհրդարանական համակարգերի հետ: Դա ոչ միայն արագացնում է աղանդի մոդերնիզացիան, այլև ընդգծում և մեծացնում է իմամի եզակի դերը:

Ինչպես արդեն նշեցինք, ժամանակակից միտումների հետևանքով, իսմահիլների մոտ ձևավորվել է բազմաթիվներության կամ բարդ ինքնուրյան ֆենումենը: Այսօր իսմահիլական զլրավացնեայի, տարբեր կրոն-եզզվական խմբերի և համընդհանուր կրոնական ուսմունքի համադրություն է:

Կարևոր է նշել, որ Աղա Խան III միշտ կոչ էր անում իր հետևորդներին ուսումնասիրել սեփական պատմությունը և իմանալ բոլոր իմամների անուններն ու

հերթականությունը: Նրա նպատակն էր ամրացնել իսմահլական ինքնությունը կրոնական ինքնազիտակցության միջոցով:

Ներկայում Հնդկաստանի իսմահլականները ավելի շատ իրենց մուսուլման են համարում, քան հնդիկ: Հնդիկներն ել, իրենց հերթին, դիտարկում են իսմահլիներին որպես մուսուլմաններ: Սակայն, օրինակ, ԱՄՆ-ի և Պակիստանի պահպանողական սունիները իսմահլիներին ընդհանրապես մուսուլման չեն համարում:

Այսօր իսմահլականներին կոչում են ժամանակակից մտածողություն ունեցող մուսուլմաններ (modern-thinking muslims): Եվ նրանց վերագրում են առաջելական Միդաս արքայի հատկանիշները (Midas golden touch): Նրանք հանգիստ փոխառում են արևմտյան ապրելատները և չեն տեսնում կրնչիլիս սեփական հավատքի և արևմտականացման միջև:

Իսմահլականները ստեղծել են միջազգային կառավարման հիերարխիկ համակարգ:

Այսպիսով, ժամանակակից իսմահլականները իրենցից ներկայացնում են սեփական տարածք չունեցող, կրոնաբարձրական հանրություն՝ տիտղոսավոր առաջնորդով, սեփական դրոշով, զահով, ընդհանուր լեզվով և ընդհանուր սահմանադրությամբ: Միշիններականությունը հատուկ չէ ժամանակակից իսմահլականությանը: Դա եղակի բազմազգ երևույթ է՝ «ազգ» առանց պետության, որն ունի կառավարման խորհրդարանական համակարգ: Այն բարդ համակարգ է, որը սակայն ունի վառ արտահայտված սեփական ինքնություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Իսմահլականները, հակառակ անրնդմեջ շարունակվող հետապնդումներին և, որպես դրա հետևանք, թակիյայի սկզբունքի (այսինքն՝ կրոնական կրնապիրացիայի) կիրառմանը, պահպանվել են, որպես մեկ միամանական համայնք՝ վար արտահայտված ինքնությամբ: Այս փաստը խոսում է համայնքի կառավարման ավանդույթների ձկունության և ցանկացած պատմական պայմաններին հարմարվելու ունակության մասին, որը թույլ է տվել պահպանել ինքնության հիմնական առանցքը:
- Տարբեր մշակութային և կրոնական միջավայրերում գոյատելու անհրաժեշտությունը պայմանավորել է իսմահլական ինքնության անրնդմեջ փոխակերպման գործընթաց՝ տվյալ պատմական իրականությանը համապատավասան:
- Անսխալական և անմեղ իմամի կրնցեպցիան և թակիյայի սկզբունքը արմատական գործոններ հանդիսացան իսմահլական ինքնության կայացման մեջ:
- Իսմահլական բարեփոխումների ծրագիրը, յուրովի կերպով, պատմական որոշակի կուապի վրա համայնքը դուրս մղեց վերեթնիկ մակարդակ:
- Իսմահլական միջազգային համայնքի ինքնության զարգացման և կայացման հիմքում ընկած է մի այնպիսի ֆենումեն, երբ կրոնական բարեփոխումները, բացի դոգմատիկ ոլորտից, ազդում են նաև համայնքի սոցիալական

- կառուցվածքի վրա՝ ձևափոխելով այն ավելի ճկուն համակարգի, այնուամենայնիվ, խիստ եւ հստակ ձևավորված նվիրապետությամբ:
- Իսմահլական պատմության տարբեր ժամանակահատվածներում նկատվում է իսմահլական ինքնության անընդհատ տրանսֆորմացիա՝ բազային, կրոնական ասպեկտի պահպանմամբ: Այդ կրոնական ասպեկտը նաև հիմք է հանդիսանում սոցիալական հիերարխիայի կառուցման համար:
- Իսմահլականների նորագոյն պատմության մեջ հենց Աղա Խանների (I-IV) անձնավորություններն են ժամանակակից իսմահլական ինքնության հիմք հանդիսացել:
- Իսմահլականների ինքնության ձևակերպումը, որը ներկայացվեց Աղա Խան III-ի կողմից որպես իսմահլիների կրոնական հավատալիքները և պրակտիկան բնութագրող փասուաթությունը, առանցքային դեր է խաղացել ժամանակակից իսմահլականների ինքնության ամրացման գործընթացում:
- Իսմահլական համայնքներում անցկացվող վեստերնիզացիայի, դեկինտրոկացիայի և իզամիզացիայի ռեփորմները ակտիվորեն ազդեցույթուն են ունեցել ժամանակակից իսմահլիների ինքնության կայացման գործընթացում:
- Իսմահլականների ինքնության կայացման գործընթացում կարևոր դեր է խաղում Աղա Խան IV-ի կողմից ներմուծված պլուրալիզմի (բազմակարծության) զաղափարը, որպես այլ մշակույթների, արթեքների և համոզմունքների հանդեպ հանդուրժողականություն և ժամանակակից աշխարհում գոյատելու սկզբունք:
- Ժամանակակից իսմահլականության, այսպես կոչված, մերձեցումը իզլամի հետ (ուխտազնացություն Մերքա, Ռամադան ամսվա պահի պահպանումը և այլն) չի կարող խարիսկել Աղա Խան IV-ի դիրքերը, որպես իսմահլականների միակ առաջնորդի, քանի որ իսմահլական պատմությունը ապացուցում է, որ համայնքը պատմության ընթացքում մշակել է ինքնակառավարման ներքին մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս պահպանել դեկավարության անժիստելի իշխանությունը, որպես իսմահլական ուսմունքի և իսմահլական ինքնության երաշխիք:
- Բազմաթիվ ռեփորմների, հաճախակի միզրացիանների, լեզուների և մշակույթների բազմազանության հետևանքով իսմահլականների ինքնությունը ձեռք է բերել բազմահնքնության (մոլուստիդենտիչություն) կամ բարդ ինքնության բնույթը:
- Բազմատիճան կառավարման հետևանքով զարգացել է միջազգային իսմահլականության ֆենումեն, որն իրենից ներկայացնում է տարբեր էրնութեական խմբեր՝ մեկ համընդհանուր կրոնական ուսմունքով միավորված:
- Աշխարհով մեկ սփուրված համայնքը՝ չունենալով ոչ տարածքային, ոչ լեզվական, ոչ է ազգային սահմանափակումներ, որպես միակ կապող օրակ ունի մեկ ընդհանուր կրոնական ինքնություն, որը և հիմք է հանդիսանում ընդհանուր իսմահլական ինքնության ամրացման և գոյատևման համար:

- Իսմահիլականները չեն խրախուսում համայնքից դուրս ամուսնությունները: Իդեալական ընտանիքը մի կառուցվածք է, որը ներդաշնակության մեջ է գոնվում ամբողջ համայնքի և նրա հիերարխիկ կառուցվածքի հետ: Այս գործոնը կարեոր լծակ է ժամանակակից աշխարհում իսմահիլականության ինքնության պահպանման համար:
- Իսմահիլականների կենտրոնացված կառավարման հիերարխիկ կառուցվածքը թույլ են տալիս աջակցել միասնական իսմահիլական ինքնության պահպանմանը միջազգային մակարդակում:
- Իսմահիլականությունն այսօր խոշոր միջազգային ցանցային կառուցվածք է՝ համայնք, որը մի շարք բարեփոխումների հետևանքով ձեռք է բերել ձկուն ինքնություն: Այդպիսի ձկունությունը մի կողմից թույլ է տալիս պահպանել իսմահիլականության հիմնական սկզբունքները ցանկացած քաղաքական, տնտեսական կամ մշակութային միջավայրում, իսկ մյուս կողմից՝ հարմարվել տեղական առանձնահատկություններին, հիմնալի կերպով ինսեպտելով ցանկացած էթնիկ միջավայր՝ չփորցնելով սեփական կրոնական ինքնության հիմքերը:
- Իսմահիլական համայնքների պատմությունը ցույց է տալիս դրանց փոխակերպումը դեպի նոր որակ՝ իսմահիլական ինքնության հիմքերի պահպանմամբ:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրատարակած
աշխատությունները

1. Баласян-Хачатуян Н., Ахл ал-Китаб и толерантность Фатимидов, *Orientalia*, 2010, IX, Ереван, էջ 106-109:
2. Баласян-Хачатуян Н., Имамиллыты Китая, *Orientalia*, 2010, X, Ереван, էջ 109-113:
3. Хачатуян Н., Имамиллыты Афганистана, *Orientalia*, 2011, XII, Ереван, էջ 23-41:
4. Хачатуян Н., Имамиллыты Африки, *Fرشն-նալէ*, 2010-2011, հ. 42-43, Ереван, էջ 29-35:
5. Хачатуян Н., Имамиллизм в суннитской ересиографии, *Fرشն-նալէ*, 2012-2013, հ. 44-45, Ереван, էջ 113-116:
6. Хачатуян Н., Процесс становления идентичности имамиллов в период с VIII по XVIIIвв., *Orientalia*, 2013, XIV, Ереван, էջ 5-11:

ХАЧАТУРЯН НЕЛЛИ РАФИКОВНА
ИСМАИЛИЗМ: ДИНАМИКА РАЗВИТИЯ И СТАНОВЛЕНИЯ ИДЕНТИЧНОСТИ
РЕЗЮМЕ

Идентичность как самоопределение через групповую принадлежность, феномен ее формирования, развития и окончательного становления – актуальные вопросы современной этнографии. Особенно это касается вопросов идентичности этно-конфессиональных общин, а также субэтнических групп с ярко выраженным религиозным маркером самосознания. Что касается идентичности имамиллов, то этот вопрос никогда не становился объектом специального исследования, за исключением отдельных работ, касающихся локальных общин.

К появлению имамиллизма привел раскол, вызванный спором между наследниками шестого шиитского имама Джрафа ас-Садика. Последний усовершенствовал основную концепцию доктрины имамата, которая уже изначально базировалась на вере в необходимость для человечества постоянного божественного руководства со стороны безгрешного и непогрешимого (*ма'сум*) имама, обладающего необходимыми полномочиями руководства и являющегося безапелляционным религиозным авторитетом. Эта концепция впоследствии была активно использована имамиллами и стала одним из основополагающих факторов в вопросе становления их идентичности.

Имамиллизм представляет собой учение крайнешиитского толка с хорошо разработанной системой собственной догматики и серьезным корпусом теологических трудов. Будучи важным компонентом мусульманской недогматической среды, оказывающим реальное влияние на общественно-политическую, экономическую и культурную жизнь регионов своего распространения, имамиллизм зачастую становился объектом разносторонних исследований суннитских ересиографов. Тот факт, что имамиллы, несмотря на преследования и религиозные репрессии в разные исторические периоды, и, как следствие, на широко распространенную практику сокрытия и необходимость представляться то суфиями, то шиитами-двинадесятниками, то суннитами или даже индуистами, а также несмотря на рассеянность по разным странам, сохранились как единая устойчивая община с четко выраженной собственно имамиллской идентичностью, свидетельствует о чрезвычайной гибкости традиции управления общиной ее руководством, способности общины адаптироваться к различным историческим условиям, не утрачивая при этом основного стержня идентичности.

Формирование идентичности ранних имамиллов сфокусировалось на учении Мухаммада б. Имамила о *Махди* — ожидании скорого пришествия мессии, призванного освободить угнетенных от несправедливого социального порядка, установленного «узурпаторами легитимных прав Алидов». С созданием государства-халифата Фатимидов имамиллы окончательно отмежевались от основного русла ислама и идентифицировали себя в качестве прямых легитимных наследников имамата Али. Противостояние суннизму укрепило самосознание имамиллов как

的独特性和精英性。在形成和塑造身份认同方面，中世纪伊斯梅利主义起着决定性的作用。改革家哈桑·阿斯-萨巴赫创建了伊萨米利国家（阿勒木特），他领导下的伊萨米利派在伊朗扮演了反什叶派的角色，创建了刺客团。在这一时期，特别强调的是“*巴廷*”——教义的神秘部分，伊萨米利派将自己定位为一个封闭的、秘密的团体，与世隔绝。到了十三世纪末，伊萨米利派领袖们在“阿勒木特”时期宣布“回归”，即“回到最初的信仰”。在安德鲁丹时期（十五世纪），改革在组织结构上起到了关键作用。复兴运动承认精神领袖“*伊马姆*”的地位，这成为整个伊萨米利派信仰的基础。

在印度次大陆上，伊萨米利派的身份认同是在直接来自印度教的影响下形成的，其形式是*萨特兰*，它通过艺术、文学和政治活动传播开来。这种形式的传播使伊萨米利派能够吸引广泛的追随者，并在该地区建立了一个强大的社群。

伊萨米利派的身份认同随着政治、经济和文化环境的变化而变化。在历史的长河中，伊萨米利派形成了一个复杂的网络结构，即所谓的“*伊马米耶*”。研究显示，伊萨米利派在不同历史阶段展现出不同的特征，如“*伊马米耶*”的出现，以及后来的“*伊马米耶*”和“*伊马米耶*”的分离。这些变化反映了伊萨米利派在面对外部压力时的适应性和灵活性。

改革者们通过加强伊萨米利派的内部团结和统一其信仰来促进其发展。特别是在“阿勒木特”时期，改革家们通过建立一个统一的领导层、确立一个共同的信仰中心和制定一套共同的实践来实现这一目标。这种努力导致了伊萨米利派在世界范围内传播，并在许多不同的文化和社会环境中找到了立足之地。

总的来说，伊萨米利派是一个独特的、非传统的宗教社群，它在历史上扮演了重要角色。尽管经历了无数的迫害和困难，但伊萨米利派仍然保持着其独特的身份认同，并在现代社会中继续存在和发展。

KHACHATURYAN NELLI
ISMAILISM: DYNAMICS OF THE DEVELOPMENT AND SHAPING OF IDENTITY
SUMMARY

Identity as a phenomenon of self-definition through group belonging, its formation, development and final shaping are among the most topical issues of modern social anthropology. It is particularly relevant to the problem of identity of ethno-religious communities as well as that of sub-ethnic groups with a clearly expressed religious marker of self-awareness. With regard to the Ismaili identity, this issue has never been an object of special scrutiny, except for some works on specific local communities.

Ismailism emerged as a result of a split caused by a dispute over succession between the heirs of the sixth Shiite Imam, Ja'far as-Sadiq. The latter had improved the basic concept of the Imamate doctrine, according to which the Imam has the relevant authority to leadership, being also an indisputable religious authority. Later on, this concept was actively used by the Ismailis, having become one of the basic factors in the development of their identity.

Ismailism is an extreme Shi'a trend with a well-developed doctrine, articulated in a serious bulk of theological works. Moreover, being a crucial component of the Muslim non-dogmatic environment, Ismailism actually affects the socio-political, economic and cultural life of the area of its distribution. More often than not, Ismailism had become an object of comprehensive analysis of the Sunni heresiographers.

Despite persecutions and religious repressions at different historical periods, and consequently, despite the wide-spread practice of conspiracy and the need to pretend to be either Sufis, or Shi'ite-Twelvers, or Sunnis, or even Hindus, as well as despite being scattered in different countries, the Ismailis have survived as a sustainable community with a clearly expressed Ismaili identity. This fact proves an extraordinary flexibility of the governance tradition in the community and its capacity to adapt to different historical conditions without losing the core identity.

The formation of the early Ismaili identity was focused upon the doctrine about the *Mahdi*, proposed by Muhammad b. Ismail – the expectation of the Messiah who would free those suppressed the “*usurpers of the Ali descendants' legitimate rights*”. With the emergence of the Fatimid Caliphate, the Ismailis, having ultimately dissociated from the mainstream of Islam, identified themselves as the direct heirs of Ali Imamate. The confrontation to the Sunni tradition contributed to the specific self-awareness of the Ismailis as that of a unique, elitist group. A crucial role in the formation of the Mediaeval Ismailism and crystallization of the Ismaili identity in that period was played by Hassan as-Sabbah, who founded the Ismaili state in Iran (Alamut). His reforms assigned a radical-militant role to the Nizari Ismailis in Iran; he founded the Assassins' order. Particularly actualized at this period was the idea of *batin* (esoteric part of the doctrine); the Nizari Ismailis started positioning themselves as a closed group having a special mission – the opposition to the Seljuks. In the meantime, by the end of the Alamut period (13th c.) the Ismaili leaders had taken a more loyal position towards the Muslim dogma and declared “the return to the

authentic Islam". During the Anjудан Revival (15th c.), the reforms of the community structure played a key role in the consolidation of the Ismailis and in new transformations of their identity. The Imam's role, actualized as never before, became an axis of the identity shaping among the Nizari Ismailis.

The Ismaili identity on the Indian subcontinent was shaped under the immediate influence of Hinduism, while its local specific form- *satpant* – was mainly developed due to the smart policy of Ismaili *Pirs*, who, using local languages and adapting Hindu mythology subjects, made their sermons apprehensible and understandable for the Hindu audience.

Ismailism was developed and modified depending on political, economic and cultural transformations of the milieu. In each country harboring the disciples of this doctrine, Ismailism had its specific features. Ismailism today is a large-scale network, a community wherein the reformation in the Middle Ages resulted in the development of flexible identity. This flexibility allows the community to retain the inviolable principles of Ismailism in almost any political, economic or cultural environment, simultaneously adapting to local conditions, that is to integrating into any society without losing the Ismaili identity. Analyzing the development and formation of the Ismaili identity, we encounter a phenomenon when the religious reformation, having preserved the esoteric part of the doctrine for the chosen, at a certain historical stage, paradoxically brought the community to the supra-ethnic level, by means of popularization of the outer part of the doctrine and introducing it as missionary faith.

The reformists' activity and the latest Imams' policy of modernization have promoted the development of modern Ismaili communities and further shaping of the Ismaili identity. Particularly emphasized is the permanent character of the reforms – particularly those of westernization, deindianization, islamization - as forms of survival of the Ismaili community. In the contemporary history of the Ismailis, it was just the figures of the Ismaili religious leaders, the Imams, Aga-Khans (I – IV), who became the core, around which the modern Ismaili identity is being shaped.

The unification of the world-wide Ismaili identity is the main vector of the modern reforms in the community.

Thus, the Ismailis are a deterritorialized community with a titled leader, its own flag, throne, a common secular language, English, with its own parliament structure and a unified Ismaili constitution. Proselytism is not typical of modern Ismailism.

The modern Ismaili community is a unique multiracial and multinational phenomenon, a sort of stateless nation with a parliamentary structure of governance. It is a complicated, mixed, and at the same time deeply intertwined, progressive community, with the distinct unified - pan-Ismaili - identity, demonstrating flexibility of traditions and capacity of adapting to new conditions.

